**Արձանագրություն N 3**
**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի / նախաորակավորման/**
**/ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ.**
**կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության**
**ձեռքբերման /**

<u>Երկիր</u>
Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան

27 մարտի 2026թ.

**<u>Ընթացակարգ</u>**
Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի նախաորակավորման փուլ:

<u>Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը</u>
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

<u>Ծրագրի անվանումը</u>
Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

**<u>Նիստին մ</u>ասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,
Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ա. Առուշանյանը, Ս. Ալեքսանյանը, Մ. Բաբայանը և Ա. Սերգոյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի**
**նախաորակավորման հայտերի բացման մասին**

Ջրային կոմիտեի կարիքների համար անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ» ծածկագրով ընթացակարգի նախաորակավորման հայտերը բացվել են 2026 թվականի մարտի 24-ին, ժամը 16:00-ին /հրապարակվել է 09.03.2026թ./:

**Սահմանված ժամկետում «ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ» ծածկագրով ընթացակարգի**
**նախաորակավորման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ ընկրություն (ները)**

| Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար | Հասցե |
|---|---|---|
| Fichtner GmbH & Co. KG | Artur.Makaryan@fichtner.de , info@fichtner.de, Jessica.Tiele@fichtner.de հեռ. +49 (711) 8995 356 | Սարվեյշտրասե 3, 70191 Շտուտգարտ, Գերմանիա |
| «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ | H.Meindl@decon.de Tender@decon.de հեռ.+49(6172) 85 06-152 ֆաքս: +49(6172) 85 06-490 | Բեռներ փողոց, 71, 60437 Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիա |

**Մասնակիցների կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում նախաորակավորման հայտարարությամբ պահանջվող փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ**

---

Հանձնաժողովը արձանագրեց՝

**Fichtner GmbH & Co. KG** ընկերության կողմից ներկայացված հայտում.

**1. Հավելված N 1**

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ((WC-SPOT-26/1-TA) ծածկագրով բաց մրցույթի նախաորակավորման ընթացակարգի հայտարարության

**«ԴԻՄՈՒՄ նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու»** փաստաթղթում նշված է «1. Հայտատուի անվանումը՝ առաջատար (Lead) Fichtner GmbH & Co. KG, տեղական ենթախորհրդատու «EA Energy Advisory» ՍՊԸ»:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 6-րդ ենթակետը՝ այն է, «եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները.», հայտատուն պետք է ներկայացնի գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները:

***<u>2. Հավելված 4</u>***

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով բաց մրցույթի նախաորակավորման ընթացակարգի հայտարարության «Մասնագիտական անձնակազմի մասին տեղեկատվություն» աղյուսակում «խմբի ղեկավարի տեղակալ/ Տեղական համակարգող» և «Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ճարտարագետ» մասնագետները կրկնվում են, անհրաժեշտ է ներկայացնել յուրաքանչյուր մասնագիտական անձնակազմի առանձին մասնագետներ:

**«Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊ** ընկերության կողմից ներկայացված հայտում.

Ընկերության կողմից լիազոր ներկայացուցչի լիազորագրում Ծրագրի անվանումը նշված է «Հայաստանի ջրամատակարարման և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր-Ծրագրի 1-ին փուլ»:

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի Ծրագրի անվանումն է «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի

նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում»: Անհրաժեշտ է Ծրագրի անվանումը շտկել:

**Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ((WC-SPOT-26/1-TA) ծածկագրով նախաորակավորման ընթացակարգի հայտարարության 20-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, (որի մասին հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով կտեղեկացնի մասնակցին) առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 30.03.2026թ շտկել անհամապատասխանությունը:**

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 31.03.2026թ. ժամը 12:00-ին, (ըստ անհրաժեշտության կարող է հրավիրվել լրացուցիչ նիստ), որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-8, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ________________ | Տ. Քանքանյան |
| անդամներ | ________________ | Ա. Մարգարյան |
| | ________________ | Ա. Սիմոնյան |
| | ________________ | Ս. Ասրյան |
| | ________________ | Ա. Առուշանյան |
| | ________________ | Ս. Ալեքսանյան |
| | ________________ | Մ. Բաբայան |
| | ________________ | Ա. Սերգոյան |
| Քարտուղար | ________________ | Ա. Սարգսյան |